

նումն է եւ գործունէութիւնը: Մեր մէջ՝ Գպրոց եւ Եկեղեցի միշտ հաշտ, միշտ իրարու ձեռնտու ապրած են, զիրար սնուցած են: Պէտք չէ որ այս զուգահեռականութիւնը վտանգուի ո՛ր եւ է կերպով: Մեր Գպրոցներն ու Եկեղեցիները եւ Եկեղեցիներն ու Գպրոցները համահաւասար ուշադրութիւն պէտք է գրաւեն հիմայ ալ: Երկուքին ալ բարեկարգութիւնը իրարու գոյութիւնը կ'ապահովէ: Միակողմանի խնամքը կը վտանգէ զուգահեռականութիւնը: Մէկուն զրկանքը միւսին սիրկանքը չապահովեր:

Ս. Լուսաւորիչ Եկեղեցին, որչափ որ կրցայ դիտել եւ ուսումնասիրել իր կրթական ու եկեղեցական մատակարարութեան սկզբունքները, ո՛չ միայն իր առաջնութեամբ ու հնութեամբ գլուխն է բովանդակ Պոլսի եկեղեցիներուն, այլ մանաւանդ Մայրատառի մէջ կեդրոնական վարժարան մըն ալ ծնելու առաջնութիւնը ունեցած է. վարժարան մը, որ կրթական ուժեղ եւ հիւթեղ ծրագիր մ'ունի եւ ունեցած է մատակարարական ամենէն բարձր դասի մը, Թուրքիոյ Հայոց կրթական բարբերուն մէջ ուշագրաւ երեւոյթ մը:

Այնպէս որ կեդրոնականը, նոյն իսկ իր այսօրուան վիճակին մէջ, հակառակ տեղի ունեցած սեղմումներու, էր գրեթէ քուրսը ունեցող Ս. Լուսաւորիչ Եկեղեցին կ'առնէ: — Վասն զի կրթական այդ բարձր հաստատութիւնը ապահովելու համար՝ Ներուէս Պատրիարք Ս. Լուսաւորչի կալուածները ուղղակի կ. վարժարանի յատկացուցած է եւ այս գործը յաջողցնելու համար իր անունով ընկերութիւն մըն ալ հաստատած է. — «տարիներէ ի վեր տրուած աշխատութեամբ եւ Ներուէս-Վարժարանի ընկերութեան Գործադիր Յանձնաժողովոյ ջանքի կատարուած հանգանակութեան շնորհիւ, Ղալաթիոյ կալուածոց հասոյթներն 1886 Յունվար 1էն ի վեր ազատ են գրեթէ բոլորո-